Medi-Cal-ի Ամբողջական Փաթեթ 50+ Տարիքի Անձանց Համար

Կալիֆորնիայի նոր օրենքը թույլ է տալիս 50 տարեկան և ավելի բարձր տարիքի Կալիֆորնիայի բոլոր իրավասու բնակիչներին անվճար ստանալ Medi-Cal-ի Ամբողջական Փաթեթը՝ անկախ ներգաղթային կարգավիճակից:

Գրանցվե՛ք հիմա:

Արդյո՞ք Կալիֆորնիայի կառավարությունը տրամադրում է Medi-Cal:

Այո: Medi-Cal-ը Նահանգային բժշկական ապահովագրություն է յածր եկամուտ ունեցող մարդկանց համար:

Արդյո՞ք Medi-Cal-ը կվնասի իմ ներգաղթային կարգավիճակին:

Ոչ: Medi-Cal-ի «ամբողջական փաթեթը» ստանալը և դրանից օգտվելը (բացառությամբ ծերանոցների կամ հոգեկան առողջության խնամքի կենտրոնների) չի վնասի անձի ներգաղթային կարգավիճակին: Ներգաղթի կարգավիճակի հետ կապված հարցերի դեպքում դիմեք Լոս Անջելեսի Շրջանի Ներգաղթյալների Հարցերով Զբաղվող Գրասենյակ՝ կանգահարելով 1-800-593-8222 հեռախոսահամարով կամ այցելելով oia.lacounty.gov կայքէջ:

Ի՞նչ կարող եմ ստանալ Medi-Cal-ի ամբողջական փաթեթի միջոցով:

Medi-Cal-ի «ամբողջական փաթեթը»-ը բժշկական ապահովագրություն է, որն ընդգրկում է՝

Այցելություններ բժշկին
Ախտաբանական ծառայություններ
Լսողության (աչքի) բուժում
Մասնագետների մոտ այցերի կազմակերպում
Հոգեկան առողջության բուժում
Թմրանյութերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումների հետ կապված ծառայություններ
Դեղատոմսերի և բժշկական պարագաների տրամադրում
Տնային խնամք
Փոխադրում բժշկական ժամադրությունների վայրեր
Եվ շատ ավելին

Արդյո՞ք ես պետք է որևէ վճարում կատարեմ:

Շատ անձանց և ընտանիքների համար վճարումներ չկան:

Ինչպե՞ս կարող եմ դիմել Medi-Cal-ի համար:

Զանգահարեք ձեր տնային բուժօգնության կլինիկա:

• Ձեր տնային բուժօգնության կլինիկան կարող է օգնել ձեզ դիմել Medi-Cal-ի փաթեթի համար: Գտեք ձեր MHLA-ի տնային կլինիկան հետևյալ հասցեով՝ dhs.lacounty.gov/our-locations:

Կարող եք զանգահարել նաև՝

• Առողջապահական Հարցերով Զբաղվող Համայնքային Աջակցության Նախաձեռնություն՝ (213) 749-4261 հեռախոսահամարով:

• BAILA-ի Ցանց՝ (888) 624-4752 հեռախոսահամարով կամ BAILAnetwork.org կայքով:

• Լոս Անջելեսի Շրջանի DPSS՝ (866) 613-3777 հեռախոսահամարով կամ Benefitscal.com կայքով:

Խնդրում ենք չհապաղել: Դիմեք Medi-Cal-ի համար այսօր: